

Արկաղի ԱԿՈՊՈՎ

ԴԱՎԻԹ ԿՅՈՒՐԱՊՊԱՂԱՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ X ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Մեծ Հայքի XIV նահանգ Տայքը Մամիկոնյան նախարարական տան՝ պատմական ասպարեզից հեռանալուց հետո անցնում է նրանց հետ խնամիական կապերով կապված Բագրատունիներին: IX դ. սկզբին Աշոտ Մսակեր Բագրատունին Տայքի ճակք գավառում՝ հռչակավոր Իշխանաց գյուղից ոչ հեռու, կառուցում է Կաղամախի ամրոցը և այնտեղ տեղափոխում իր ընտանիքը: Նրա օգնությամբ Տայք են տեղափոխվում նաև արաբներից հալածվող Գնունիները: Ըստ Ն. Ադունցի՝ ողջ IX դ. ընթացքում և X դ. սկզբին՝ մինչև Սմբատ I-ի մահը (913 թ.), Տայքի մեծագույն մասը մնում էր հայերի ձեռքում¹:

Տայքի հյուսիսային հատվածը միացած էր Կղարջքի Բագրատունյաց իշխանությանը (կյուրապաղատությանը), որն առաջացել էր IX դ. սկզբին՝ IX-X դարերում այն բավականին ընդարձակում է իր տարածքները: X դարում կյուրապաղատությունը հարավից և հարավ-արևելքից սահմանակից էր Կայսիկների ամիրայությանը և Այրարատի Վանանդ գավառին, հյուսիս-արևելքից՝ Վրաստանին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Բյուզանդական կայսրությանը: Բացի Գուգարքի և Տայքի գավառներից, այս իշխանության մեջ ընդգրկվեցին նաև վրացական որոշ գավառներ (Մեսխեթի և այլն), որի հետևանքով կյուրապաղատությունը խառն ազգաբնակչությամբ պետություն դարձավ²:

Տայքը կարևոր նշանակություն է ստանում Բյուզանդիայի և Այսրկովկասի երկրների համար ինչպես իր դիրքի, այնպես էլ տեղական բավականաչափ զորեղ իշխանության առկայության շնորհիվ, որն իր հզորության գագաթնակետին հասավ Դավիթ Կյուրապաղատի օրոք (960-ականներ - 1001 թթ.): Դավիթ Կյուրապաղատը բարձր զնահատականի է արժանացել ինչպես հայ պատմիչների՝ Ատոկիկի, Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռնայեցու, այնպես էլ վրաց տարեգիրների կողմից: Լաստիվերտցին նրան անվանում է հզոր, աշխարհաշեն, առատաձեռն ու աղքատասեր մարդ, իսկպես խաղաղություն սահմանող³, Ուռնայեցին՝ Աստծո սուրբ մարդ և աստվածասեր⁴, վրացի տարեգիրը՝ գթասիրտ, խաղաղասեր, անհիշաչար, վանականների հովանավոր, եկեղեցիներ հիմնող, մարդասեր⁵: Հենց Դավիթ Կյուրապաղատն է, ըստ վրացի տարեգրի, եղել «միասնական վրացական թագավորության» ստեղծման ջատագովներից մեկը, չնայած վրաց պատմագրության մեջ գոյություն ունի մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ Տայքի դերը միասնական վրացական պետության ստեղծման գործում տարեգիրների մոտ գերազնահատված է⁶:

Համաձայն վրացական աղբյուրների՝ 975 թ. Վիրքի երիսթավ (ազգագրուխ) Իվանե Մարուշի-ձեն (Մարուշի որդի Իվանեն), նեղվելով Կախեթի իշխանների կողմից, իր դեսպանին ուղարկում է Դավիթ Կյուրապաղատի մոտ, առաջարկում իր գործով

¹ Ադունց Ն., Դավիթ Կյուրապաղատ, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2002, 3, էջ 19:

² Կյուրապաղատության հիմնադիրն Աշոտ Բագրատունին էր՝ Աշոտ «կույր» Բագրատունու որդի Վասակ Բագրատունու թոռը:

³ Տաշեան Հ., Հայ բնակչությունը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 70:

⁴ Պատմություն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտցույ (այսուհետև՝ Լաստիվերցի), Թիֆլիս, 1912, էջ 3:

⁵ Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն (այսուհետև՝ Ուռնայեցի), Վաղարշապատ, 1898, էջ 36:

⁶ Տեն Լետոпись Кармли, перевод, введение и примечание Г. В. Цулая, Тбилиси., 1982, с. 57.

⁷ Գ. Մելիքիշվիլիի կարծիքով, Տայքը, գտնվելով մեկ այլ պետությունից վասալական կախվածության մեջ, չէր կարող IX-XI դդ. լինել Վրաստանի քաղաքական միավորման մեջ գլխավոր ուժը: Տեն Թելոქიშვილი გ., ფეოდალური საქართველოს პოლიტიკური გაერთიანება და საქართველოში ფეოდალურ ურთიერთობათა განვითარების ზოგადი სკიოტი, თბ., 1973.

գալ և վերցնել Վիրքը, որպեսզի կամ ինքը տիրի այնտեղ, կամ էլ այն զիջի Բագրատին՝ Տայքի հյուսիսային մասի կառավարիչ Գուրգենի և Աբխազաց Գեորգ թագավորի դատեր՝ Դավիթը տիրացավ Վիրքի կենտրոն Ուփլիսցիխեին, քանի որ անժառանգ էր, որդեգրեց Բագրատին, այնուհետև իր մոտ կանչեց Վիրքի ազատներին և պարտադրեց հնազանդվել Բագրատին՝ իբրև «Տառլի, Քարթլիի և Աբխազիայի ժառանգորդի»⁷: Այս իրադարձություններն ընկան միասնական վրացական պետության ստեղծման արդի հայեցակարգի հիմքում, որի հեղինակն է Ի. Ջավախիշվիլին⁸:

970-ական թթ. վերջերին ծանրացավ Բյուզանդական կայսրության վիճակը: Վասիլ (Բարսեղ) II-ի (976-1025թթ.) կառավարման սկզբին նրա դեմ հուժկու ապստամբություն բռնկվեց Վարդ Սկլերոսի՝ փոքրասիական ազնվականության հզորագույն ներկայացուցիչներից մեկի գլխավորությամբ: Սկլերոսն իր կողմը բերեց կայսրության զինված ուժերի մեծ մասը, ինչպես նաև գրեթե ամբողջ Փոքր Ասիան: Ապստամբությունը ճնշելու համար կայսերական իշխանությունն օգտագործում է իր բոլոր միջոցները: Կայսրության ծանր վիճակից փորձեցին օգտվել արաբական ամիրայությունները: Մրվանյանների Բատ ամիրան գրավեց Մանազկերտը: Այս վճռական պահին Վասիլ II-ը Թռոնիկ Թռոնիկյանի միջոցով դիմեց Տայքի տիրակալին՝ օգնական զորք խնդրելով կայսերական արևելյան բանակի համար, որպես հատուցում խոստանալով «ցկյանս» հանձնել նրան նոր հողային տիրույթներ՝ Խաղտո առիճը, Կոնուրքը, Չորմայրը, Կարինը, Բասենը, Մարդաղի գավառը (կամ Սևուկ բերդը), Հարքն ու Ապահունիքը: Դավիթն ընդունեց առաջարկը և 979թ. իշխանաց իշխան Ջոջիկի ու Թ. Թռոնիկյանի գլխավորությամբ կայսերական բանակին օգնության ուղարկեց 12 հազարանոց մի զորամաս⁹: Այս զորամասն աչքի ընկավ Հալիս գետի ափին՝ Մարավենն դաշտում տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ Սկլերոսի բանակը պարտություն կրեց:

Սկլերոսի ապստամբության հետևանքով ծանր վիճակում հայտնված Վասիլ II-ը դիվանագիտական նուրբ քայլի էր դիմել: Դավթին փաստորեն, «ցկյանս» տրվել էին այնպիսի տարածքներ, որոնք այդ պահին մեծ ցանկության դեպքում անգամ Բյուզանդիան չէր կարող փոխանցել Տայքին, քանի որ Հարքը և Ապահունիքը չէին պատկանում նրան, իսկ Խաղտո Առիճը և Չորմայրին Թռոնիկյանների տիրույթներն էին: Դավիթը կայսրությունից առավելագույնը կարող էր ստանալ միայն Տայքից հարավ ընկած հարևան շրջանները, այսինքն Կարինն ու Բասենը¹⁰: Վասիլ II-ի այս քաղաքականությունը նշանակում էր, որ ոչ հեռու ապագայում այդ հողերը Բյուզանդական կայսրությունը հետ կստանար: Դավիթ Կյուրապաղատը, որ մանրամասն չէր հաշվարկել Բյուզանդական, այսպես կոչված, «փոխհատուցման» դրական և բացասական կողմերը, երբ փորձեց հաստատվել իր «պարզևական» տիրույթներում, ապա անմիջապես հասկացավ, որ իր ժառանգության դիմաց ստացել էր, ոչ թե որոշակի տարածքներ, այլ ընդամենը այդ տարածքները գրավելու իրավունք:

Եթե Կարինի և Բասենի միացումը կյուրապաղատությանը չհետաձգվեց, ապա Հարքն ու Ապահունիքը Դավիթ Կյուրապաղատին անցան միայն 990 թ., երբ «կյուրապաղատն Հայոց Դավիթ պաշարեալ զՄանազկերտ քաղաք»,¹² գրավեց այն՝ այնտեղ վերաբնակեցնելով վրացիների և հայերի:

⁷ *Տես մելոյիշվիլի Գ., Գեորգալուրի Տայքի թագավորի թագավորի Գեորգի և Աբխազաց Գեորգ թագավորի դատեր՝ Դավիթը տիրացավ Վիրքի կենտրոն Ուփլիսցիխեին, քանի որ անժառանգ էր, որդեգրեց Բագրատին, այնուհետև իր մոտ կանչեց Վիրքի ազատներին և պարտադրեց հնազանդվել Բագրատին՝ իբրև «Տառլի, Քարթլիի և Աբխազիայի ժառանգորդի»*, էջ 57:

⁸ *Տես Վիրքի և Վիրքի ժառանգությունը*, Թ. 1, տ. 1, 1955, թ. 274:

⁹ *Տես Գեորգիշվիլի Գ., Վիրքի ժառանգությունը*, Թ. 2, տ. 1, 1960, թ. 123-124:

¹⁰ *Տայքը փոքր երկիր էր, որպեսզի կարողանար ուրիշի 12 հազարանոց զորք տրամադրել: Մակայն դիվանագիտական հմտություններով և մեծ հմայքով օժտված Դավիթ Կյուրապաղատն ի հաշիվ հայ և վրացի տիրակալների կարողացավ օգնել կայսրությանը:*

¹¹ *Տես Տեպանենկո Վ. Մ., Апачуник в византийско-таоских отношениях в период мятежа Варды Склира (976-979), Античная древность и средние века, вып. 10, 1973, с. 221.*

¹² *Ստեփաննոսի Տարոնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 266:*

Հակամարտ ուժերի պայքարը Բյուզանդիայում նոր թափով վերսկսվեց 980-ական թթ.: Դավիթն այս անգամ միացավ կայսեր դեմ ապստամբած Վարդ Փոկասին՝ փոքրասիական ազնվականության մեկ այլ ներկայացուցիչ: Դավիթի կողմից Փոկասին օգնելը պայմանավորված էր նրանով, որ վերջինիս հետ բարեկամական հարաբերությունների մեջ էր սկսած այն ժամանակից, երբ Փոկասը «Խաղիայի (Խաղտիք) դուքսն էր»:¹³ Սակայն միայն ջերմ հարաբերությունները չէին, որ ստիպել էին Տայքի տիրակալին միանալ Փոկասին: Դավիթն իրեն խաբված էր զգում, քանի որ Վասիլ II-ից ամբողջությամբ չէր ստացել շուրջ տասը տարի առաջ խոստացված փոխհատուցումը և հիմա հարմար պահ էր վրեժ լուծելու համար, առավել ևս, որ իր վաղեմի բարեկամ Փոկասը շռայլ խոստումներով թուլացրել էր Տայքի տիրակալի սքափ դատելու կարողությունը:

Այդ ընթացքում վատացան նաև Դավիթ Կյուրապաղատի և Բագրատ III-ի (975-1014 թթ.) հարաբերությունները: Ըստ վրացի տարեգրի, դրա պատճառը Վիրքի էրիսթավներին մեկի՝ Ռատ Բաղվաշի չհնազանդվելն էր «միավորված Վրաստանի թագավոր» Բագրատին: Վրաց թագավորն իր ուժերով մտնում է Վիրք՝ նպատակ ունենալով գերել Ռատին: Վերջինս օգնության խնդրանքով դիմում է Դավիթ Կյուրապաղատին՝ իր կողմից ավելացնելով, որ Բագրատ III-ի իրական նպատակը Տայքի տիրակալին վերացնելն է:¹⁴ Մ. Լորդկիպանիձեի կարծիքով՝ Ռատ Բաղվաշը չէր ստում, և այդ արշավանքն իսկապես ուղղված էր Դավիթ Կյուրապաղատի դեմ¹⁵: 988 թ. գործը հասնում է բացահայտ ընդհարման, և ծանր կացության մեջ հայտնված Դավիթը օգնություն է խնդրում հայոց Սմբատ թագավորից և «հայոց բոլոր թագավորներից»՝ Կարսի, Վասպուրականի, Սյունյաց թագավորներից և Աղվանից իշխանից: Այս մեծ զորքին Դավիթ Կյուրապաղատն իր ոչ մեծաթիվ ուժերով միանում է Ջավախքի Դիվել գյուղում: Դավիթի և Բագրատ III-ի հոր՝ Գուրգենի զորքերն իրար են բախվում Գարդաթխրիի¹⁶ կոչվող վայրում (Տայքի և Շևշատի սահմանագլխին), ուր Գուրգենի զորքերը ծանր պարտության են մատնվում:

Գուրգենի պարտությունից հետո Բագրատը, տեսնելով ուժերի իրական հարաբերակցությունը, գալիս է Դավթի մոտ և հայտարարում, որ իր իրական նպատակն է եղել Ռատին պատժելը, և «հոր և որդու» միջև տեղի ունեցած այս անախորժությունները թյուրիմացության արդյունք են: Հայտնի չէ, հավատաց նրան Դավիթը թե ոչ, բայց լսելով նրա բացատրությունները, ազատ արձակեց իր զորքը՝ մինչ այդ ստիպելով Բագրատին հօգուտ հայոց Սմբատ II-ի զիջել Սակուրեթ ամրոցը Ջավախքում:

Առնվազն տարօրինակ է թվում Դավիթ Կյուրապաղատի վրա արշավելու Բագրատ III-ի ծրագիրը: Դավիթը վաղուց արդեն երիտասարդ չէր, և Բագրատն այսպես թե այնպես ժառանգելու էր նրա տիրույթները: Պատերազմելով Կյուրապաղատի դեմ՝ Բագրատն իր հույսը կապում էր իր ձեռնարկի անականկալ լինելու և Դավթի թուլության վրա՝ պայմանավորված Փոկասի ապստամբությանը վերջինիս մասնակցությամբ¹⁷: Սակայն կա մի հանգամանք, որը, ճիշտ է, չի մատնանշվում սկզբնաղբյուրներում, սակայն, մեր կարծիքով, Բագրատի արկածախնդիր քայլերի միակ տրամաբանական բացատրությունն է: Հնարավոր է, որ Բագրատի ելույթը Կյուրապաղատի դեմ կազմակերպված էր Վասիլ II-ի կողմից: Գտնվելով ծանր վիճակում, օգնություն խնդրելով նաև Կիլիկյան Ռուսիայից, Վասիլը կարող էր մնանատիպ խնդրանքով դիմել նաև Բագրատին¹⁸: Այս վարկածի օգտին է խոսում 1001 թ. Դավթի մահից անմիջապես հետո Բագրատի և նրա հոր՝ Վասիլ II-ին ներկայանալը և նախկինում կատարված ծառայությունների դիմաց մեծ պատիվների արժանանալը:

¹³ *Հովհաննես Մկիչիցես*, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 10, Բյուզանդական աղբյուրներ*, Գ (թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Եր., 1979, էջ 64:

¹⁴ *Տե՛ս Լեոպոլիս Կարտլի*, *с. 59.*

¹⁵ *Лордкипанидзе М. Д., История Грузии XI-начало XIII века (научно-популярный очерк)*, Тбилиси, 1974, с. 50

¹⁶ Նույնը:

¹⁷ Նույնը:

¹⁸ Նույնը:

Վասիլ II-ին հաջողվեց պարտության մատնել Փոկասին: Դա Դավիթ Կյուրապաղատին դժվարին կացության մեջ գցեց: Դավիթն ստիպված ներումով դիմեց Վասիլ II-ին՝ հպատակություն և հնազանդություն խոստանալով: Վասիլ II-ը այստեղ ևս ցուցաբերեց դիվանագետի իր ունակությունները: Կայսրը Դավիթ Կյուրապաղատին է թողնում ինչպես Կարինն ու Բասենը, այնպես էլ Հարքն ու Ապահունիքը գրավելու և կյուրապաղատության սահմանները ընդլայնելու իրավունքը: Վասիլ II-ը Տայքի Կյուրապաղատից պահանջում է միայն Տայքը կտակել կայսրությանը, քանի որ Դավիթ Կյուրապաղատն անժառանգ էր, իսկ հավանական ժառանգ Բագրատ III-ի հետ նրա փոխհարաբերությունները հեռու էին լավ լինելուց: Փաստորեն, եթե Բագրատի և Դավթի բախումը «բեմադրված» էր Բյուզանդիայի կողմից, ապա դրանով կայսրությունը մի կողմից ձերբազատվեց Տայքի ժառանգության իրական հավակնորդ Բագրատից, իսկ մյուս կողմից՝ իրավաբանորեն ձևակերպեց ու ամրագրեց իր իրավունքները Տայքի նկատմամբ:

Սմբատ II Տիեզերակալի մահից հետո 990 թ. Անիում քաղաքը է օժվում Բագրատունյաց հարստության ամենակարկառուն ներկայացուցիչը՝ Գագիկ I-ը (990-1020 թթ.): Հայոց շահնշահի և Տայքի տիրակալի միջև շատ արագ ձևավորվում են ամուր դաշնակցային հարաբերություններ, որոնք դրսևորվում են ընդհանուր թշնամու՝ արաբական ամիրայությունների դեմ պայքարում նրանց սերտ համագործակցությամբ:

990 թ. Դավիթ Կյուրապաղատի կողմից Մանազկերտի գրավումից դժգոհ են մնում այնտեղից արտաքսված արաբները: Դա առիթ է տալիս Ատրպատականի ամիրա Մամլանին հանդես գալու Հայաստանում գտնվող արաբական տարրի պաշտպանության դիրքերից և դուրս գալու Կյուրապաղատի դեմ: Մամլանն իր բանակով գալիս է Ծաղկոտն գավառ: Նրա դեմ Դավիթը դուրս է գալիս Հայոց Գագիկ և Կարսի Աբաս քաղաքների հետ դաշնակցած: Մամլանի զորքերը, տեսնելով դաշնակիցների թվական գերակշռությունը, զիջելով թողնում են իրենց դիրքերն ու հեռանում Հայաստանից¹⁹:

Դավիթ Կյուրապաղատը քաջ գիտակցում էր, որ իր մահից հետո Բյուզանդիան առանց մի կաթիլ արյան տիրանալու է այն ամենին, ինչ ինքը ձեռք էր բերել երկարատև պատերազմների արդյունքում: Սակայն նա հույսը չէր կորցնում, որ կարող է ինչ-որ կերպ փոփոխել Փոկասի պարտությունից հետո իրեն պարտադրված հաշտության համաձայնագրի պայմանները: Այն, որ Բագրատն ու Գուրգենը չէին լինելու Դավթի ժառանգները, այլևս ակնհայտ էր: 987-988 թթ. վերոհիշյալ իրադարձություններից հետո Դավթի և նրա նախնի ժառանգների միջև շփումները հասցվել էին նվազագույնի: Ստեղծված քաղաքական իրավիճակում՝ իբրև Դավթի տիրույթների ժառանգորդ կարող էր դիտարկվել նաև Գագիկ I-ը, եթե հաշվի առնենք նաև նրանց միջև ձևավորված դաշնակցային կապերը և Տայքի կյուրապաղատության՝ գերազանցապես հայկական հողերից կազմված լինելը: Մյուս կողմից՝ հասկանալով ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակի ողջ լրջությունը, կամ միգուցե հրահանգավորվելով Վասիլ II-ի կողմից, Դավթի և Գագիկի ձեռնարկումներին միանալու և ռազմական օգնություն ցուցաբերելու պատրաստակամությամբ է հանդես գալիս Բագրատ III-ը: Դա կարող էր անմիջապես մի քանի առումներով շահեկան վիճակի մեջ դնել Բագրատին. ա/ նա անմիջական մասնակից էր դառնում Տայքի կյուրապաղատի և Հայոց քաղաքների ձեռնարկումներին, բ/ մեծանում էր նրա միջազգային հեղինակությունը, գ/ վրաց արքան մոտ էր կանգնում Հայոց և Տայքի տիրակալների «ճերքին խոհանոցին», դ/ Բագրատը Տայքի տիրակալի հետ լավ փոխհարաբերությունները վերականգնելու և նրա անմիջական ժառանգը վերստին դառնալու տեսական հնարավորություն էր ստանում, ե/ հարկ եղած դեպքում Բագրատը կանխարգելելու էր իր շահերի դեմ ուղղված որևէ ձեռնարկում Գագիկ I-ի և Դավթի Կյուրապաղատի կողմից:

Շարունակելով իր ակտիվ ծավալապաշտական քաղաքականությունը՝ 997 թ. ձմռանը Դավիթը զորք ուղարկեց պաշարելու Խլաթը, սակայն պարտություն կրեց, որից օգտվեցին արաբ ամիրաները և փորձեցին վերադարձնել Մրվանյաններից խլած շրջանները, առաջին հերթին՝ Ապահունիքը: Սակայն այս հարձակումը ևս զլխավորած

¹⁹ *Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Եր., 1947, էջ 626-627:*

Ատրպատականի ամիրա Մամլանը 998 թ. Ծումբ գյուղի մոտ պարտություն կրեց Տայքի, Հայոց և վրաց միացյալ ուժերի կողմից:

Ըստ Առողիկի՝ Դավիթ Կյուրապաղատը մահացել է հայոց 449 թ. Չատկին՝ 1001 թ. մարտի 31-ին: Ըստ Լաստիվերոցու և Ուռհայեցու, վրաց Իլարիոն արքեպիսկոպոսը²⁰, մահաբույն խառնելով պատարագի հաղորդությանը, խմեցրեց Դավիթ Կյուրապաղատին, սակայն տեսնելով, որ թույնը չի ներգործում, խեղդամահ արեց նրան Ավագ հինգշաբթի օրը²¹: Իլարիոն արքեպիսկոպոսն իր հերթին պատժեց Վասիլ II-ի կողմից, «Վասնզի հայր անուն էր Դավիթ կիրապաղատ թագաւորին Վասիլն. և վասն այնորիկ կորոյս զնոսա»²²:

Իրականում ու՞մ էր ձեռնադրու Դավիթ Կյուրապաղատի մահը: Սկզբնաղբյուրների վկայությամբ Կյուրապաղատն արդեն ծեր էր, հետևաբար կար մի լուրջ պատճառ, որը նրա թշնամիներին ստիպեց արագորեն ձերբազատվելու նրանից: Ցավոք, սկզբնաղբյուրները խոսում են միայն Սեծ Կյուրապաղատի մահվան մասին և լռության են մատնում այդ ոճրագործության հետ կապված հանգամանքները: Ի՞նչը կարող էր լինել նրանից ազատվելու համար առիթ, եթե ոչ քաղաքական այն մեծ խաղը, որը սկսել էր Վասիլ II-ը 970-ական թթ.՝ Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ: Վերջին տարիների իրադարձությունները, հատկապես հայոց շահնշահի և Դավիթ Բագրատունու սերտ փոխհարաբերությունները խառնել էին կայսեր՝ Տայքի հետ կապված բոլոր ծրագրերը: Կյուրապաղատի մահից հետո կայսրը «օրինական» ճանապարհով ստանալու էր իր տիրույթները, հետևաբար, ապահովելու համար Տայքի խաղաղ անցումը Բյուզանդիային, կայսրը Դավիթին ճանապարհից հեռացնելով կապահովագրեր ինքն իրեն ավելորդ քաշքշուկներից*։ Հանգամանքների այսպիսի դասավորության պայմաններում վրացի արքեպիսկոպոս Իլարիոնը ընդամենը գործիք էր Կյուրապաղատի մահը ցանկացողների ձեռքում և անցանկալի վկա, որին շտապեց ասպարեզից հեռացնել Վասիլ II-ը կամ մեկ այլ ոք՝ թաքցնելու համար գործած ոճիրը:

Դավիթ Կյուրապաղատի մահից հետո Վասիլ II-ը շտապ եկավ Հայաստան, շրջագայեց նոր տիրույթներով՝ այցելելով Հարթ, Ապահունիք, ապա՝ Տայք, տիրացրեց բազմաթիվ գավառների, բերդերի և քաղաքների: Եկեղյաց գավառում նրան դիմավորեցին Տայքի ազատները, ներկայացան նաև Բագրատ III-ը և նրա հայր Գուրգենը: Վասիլը Գուրգենին շնորհեց մագիստրոսի, իսկ Բագրատին՝ կյուրապաղատի կոչում²³: Բագրատին շնորհվեցին նաև Դավիթ Կյուրապաղատի տիրույթների մի մասը «ցկյանս օգտագործման»: 1001-1002 թթ. ձմռանը կայսեր կողմից Կյուրապաղատի ժառանգության անարդար բաժանումից դժգոհ Գուրգենը, փորձ ձեռնարկեց Բյուզանդիայից խլել նաև Տայքի մյուս շրջանները: Իր գործով նա ռազմակալեց Տայքը, սակայն հուժկու դիմադրություն ցույց տվեց Ուրթիքը: Գուրգենի դեմ ուղարկվեց Նիկեփորոս Կանիկլեսն իր գործով: Հակամարտող կողմերը փորձեցին բանակցությունների ճանապարհով լուծել ստեղծված խնդիրը: Բյուզանդական կողմը համաձայնեց Գուրգենի տարածքային պահանջներին: Նրա տարածքներն ընդլայնվեցին ի հաշիվ Դավիթ Կյուրապաղատի նախկին տիրույթների, սակայն, քանի որ հնարավոր չէ հստակորեն սահմանա-

²⁰ Ուռհայեցի, էջ 38:

²¹ Լաստիվերոցի, էջ 3:

²² Ուռհայեցի, էջ 38:

* Հնարավոր է նաև, որ Դավիթը հրաժարվել էր Տայքը կայսրությանը թողնելու իր կտակից և իր համար նոր ժառանգ ընտրել: Չի բացառվում նաև, որ Դավիթ Կյուրապաղատը նոր կտակ էր կազմել հօգուտ հայոց շահնշահի: Այս վարկածի օգտին են խոսում ոչ միայն Տայքի և Հայոց տիրակալների լավ փոխհարաբերությունները, այլ նաև իր գահակալման վերջում «Պղնձե քաղաքի» պատմությունն արարեթենից հայերեն թարգմանել տալը: Իրերի նման դասավորության պայմաններում վտանգվում էին նաև Բագրատ III-ի շահերը: Նա Փոկասի ապստամբության ժամանակ գործարքի էր գնացել Վասիլ II-ի հետ, որի հետևանքով արդեն տուժել էր՝ զրկվելով Կյուրապաղատի անմիջական ժառանգը լինելու մենաշնորհից: Հետևաբար Բագրատը չէր ջանկարեն կապված էր Տայքը Բյուզանդիային անցնելու հետ:

²³ Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, перевод, введение и примечание М. Лордкипанидзе, Тб., 1979, стр. 57, Առողիկ, էջ 270:

գծել Կյուրապաղատի տիրությունները, հետևաբար անհնար է նաև որոշել Գուրգենին զիջված տարածքների չափը²⁴: Հայտնի է, որ Գուրգենի մահից հետո դրանք անցնելու էին Բագրատին, իսկ վերջինիս մահից հետո վերադարձվելու էին Բյուզանդիային: Ըստ Ն. Արմոցի՝ Գուրգենը ստացավ Տայքի մեծ մասը²⁵, որը 1008 թ. նրա մահից հետո՝ որպես հողային պարգև, հանձնվեց Բագրատ III-ին:

Դավիթ Կյուրապաղատի տիրությունների բաժանման ժամանակ, սկզբնաղբյուրների հաղորդմամբ, կայսրին չներկայացավ Գագիկ I-ը: Հայոց թագավորը կայսրին ներկայանալը փոքրագույնում էր համարում: Իսկ թե ի՞նչն էր Գագիկ I-ի համար նվաստացուցիչ՝ Վասիլ II-ի մոտ գնալը, թե «կյուրապաղատ» կամ «մագիստրոս» տիտղոսներով «մեծարվելը», որը սիրով ընդունվեց Բագրատ Գ-ի, Գուրգենի և մի քանի հայ մեծամեծների կողմից, այդ մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Հայտնի է նաև, որ 1001 թ. Հայոց շահնշահը զբաղված էր Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Անհողինի ելույթի ճնշմամբ*:

Կյուրապաղատության տիրությունների բռնազավթումը մեծ ազդեցություն ունեցավ Այսրկովկասի ճակատագրի վրա, քանի որ Դավիթ Կյուրապաղատի և Գագիկ I-ի դաշինքը միակ կենտրոնակ ուժն էր, որ կարող էր պայքարել հարավարևմտյան Հայաստանի և Ատրպատականի ամիրայությունների դեմ, ինչպես նաև դիմագրավել Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությանը:

1008 թ. Գուրգենի մահից հետո Տայքը, ինչպես և Դավիթ Կյուրապաղատի մյուս տիրությունները պայմանավորվածության համաձայն անցնում են Բագրատ III-ին: 1014 թ. վերջինիս մահից հետո Վասիլ II-ը պահանջում է Բագրատի որդի Գիորգի I-ից վերադարձնել իր հորը ցմահ օգտագործման տրված տիրությունները: Գիորգին «իր մանկական հասակով հպարտացած»՝ հակառակ պատասխան է տալիս, թե ինչ որ իմ հայրն իշխանությամբ ունեցել է, դրանից մի տուն անգամ չեմ տա մեկին²⁶: Այս պատասխանը, բնականաբար, մարտահրավեր էր Վասիլ II-ի համար, սակայն հեռատես կայսրը չշտապեց արագորեն լուծելու այս հարցը: Պատճառն այն էր, որ Գիորգի I-ը՝ հանձին հայոց շահնշահ Գագիկ I-ի, հզոր դաշնակից ուներ, որի հետ կապված էր նաև ազգակցական կապերով*։ Գագիկ I-ի հետ բախումից խուսափելը կարևոր պատճառներից մեկն էր, որ Վասիլ II-ը հետաձգեց Կյուրապաղատի ժառանգությանը տիրանալը: Այսուհանդերձ, Գագիկ I-ի մահից հետո, 1021 թ. կայսրն իր ուժերը շարժում է Արևելք՝ օրակարգում ունենալով Վասպուրականի և Դավիթ Կյուրապաղատի ժառանգության հարցերը:

Վասիլ II-ը հանգրվանում է Կարնո դաշտում: Գիորգիի մոտ ուղարկված դեսպանները, որոնք վրաց արքայից հնազանդություն էին պահանջել, վերադառնում են ձեռնունայն: Ավելին, Գիորգի I-ի զորքերը կողոպտում և ավերում են Ուղթիքն իր գեղեցիկ դաստակերտներով, սակայն քաղաքի բնակիչներին ֆիզիկապես չեն վնասում²⁷: Ուղթիքից Գիորգի I-ի ուժերը նահանջում են Կող, այնտեղից՝ Վանանդ: Կայսրն իր ուժերով հետապնդում է վրաց արքային և 1022 թ. Պաղակացիս (Չլդր) լճի մոտ և Արշարունիքի Շղիա վայրում ջախջախում նրան: Վրաց արքան հաշտություն է խնդրում, որի դիմաց նա իր երեք տարեկան որդուն՝ Բագրատին, պատանդ է տալիս կայսրությանը, Բյուզանդիային զիջում 14 ամրոց և Տայքի, Ջավախքի, Արդահանի ու Բասենի այն հողերը, որոնք պատկանում էին Դավիթ Կյուրապաղատին²⁸:

²⁴ *Такайшвили Е., Археологическая экспедиция в южные провинции Грузии 1917 г., Тбилиси, 1952, с. 63.*

²⁵ *Արմոց Ն., Դավիթ Կյուրապաղատ, ՊԲՀ, 2002, 3 էջ 24:*

* Չի բացառվում նաև, որ խուսափելու համար Տայքի հարցում Գագիկ I-ի հնարավոր միջամտությունից Վասիլ II-ի կողմից ասպարեզ բերվեց երիտասարդ, փառասեր և Հայոց թագավոր դառնալու շատ մեծ ցանկություն ունեցող Դավիթ Անհողինը:

²⁶ *Լաստիվերացի, էջ 7:*

* Գիորգի I-ի կինը Վասպուրականի Սենեբերիմ թագավորի և Գագիկ I-ի քրոջ դուստրն էր (*Տե՛ս Էյբե րազ օ ցրուզինսկոսկոս քոսոլստե քե անի քե 1045 շ. (ք ցեոեոլոցի ցրուզինսկոսի քե արմյանսկոսի Բագրատիդօք քե արիքրունիդօք Բասպրաքան), Անտիքնայնօստ քե սրեդնիք քե քե, 2003, Բյուք. 34, ս. 267).*

²⁷ *Նույն տեղում, էջ 12:*

²⁸ *Տե՛ս Լեոտիսք Կարտլի, ս. 63.*

Գագիկ I-ի մահից հետո սկսված գահակալական պայքարի ժամանակ Գիորգի I-ը հանդես եկավ թագաժառանգ Հովհաննես-Սմբատի շահերի պաշտպանությամբ: Այդ պայքարը համընկավ Տայքի համար Վրաստանի և Բյուզանդիայի միջև սկսված պատերազմի հետ, և Հովհաննես-Սմբատ թագավորը՝ ի փոխհատուցումն Գիորգի I-ի ցուցաբերած աջակցության, իր օգնությունն ուղարկեց վրաց արքային, որը կործանարար հետևանքներ ունեցավ Անիի Բագրատունյաց թագավորության համար²⁹:

Վրաստանի պարտությունը վճեց նաև Անիի Բագրատունյաց թագավորության ճակատագիրը, քանի որ Գիորգի թագավորի դաշնակից Հովհաննես-Սմբատն ստիպված էր Անին կտակել Բյուզանդիային: Հայոց թագավորի ներկայացուցիչ կաթողիկոս Պետրոս Գետադարձը Տրապիզոնում գտնվող Վասիլ II-ին ներկայացավ 1021 թ. դեկտեմբերի վերջերին: Բանակցություններն արագ անցան կայսեր ցանկացած ուղղությամբ: Ընդունվում էր այն նույն սկզբունքը, որ մի ժամանակ Դավիթ Կյուրապաղատն էր գործադրել, և որով էլ Վասիլ II-ը սկիզբ էր դրել իր արևելյան քաղաքականությանը: Անիի դիմաց Հովհաննես-Սմբատը մագիստրոսի կոչում և Անիի ու Մեծ Հայքի ցմահ արքունոսի պաշտոն էր ստանում³⁰: Համաձայնության այս կետը պատճառաբանվում էր նրանով, որ Հայոց թագավորն անժառանգ էր, ուստի նա իր հոծար կամքով ժառանգ էր կարգում կայսրին³¹:

Այսպիսով, Վասիլ II-ի շուրջ հիսունամյա հետևողական և հետատես քաղաքականության հետևանքով կայսրությունն առանց լուրջ ջանքեր գործադրելու ոչ միայն կարողացավ տիրանալ Դավիթ Կյուրապաղատի ժառանգությանը, այլ նաև հող ստեղծեց հետագայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին ևս կայսրությանը միացնելու համար:

ВОПРОС НАСЛЕДИЯ ДАВИДА КУРАПАЛАТА В КОНЦЕ X-ГО И В НАЧАЛЕ XI-ГО ВЕКА

____ *Резюме* _____

____ *А. Акопов* _____

Тайкское курапалатство достигло вершины своего могущества во время правления Давида Курапалата (960-ые – 1001 гг.). В 977-979 гг. правитель Тайка своими силами помог императору Василию II подавить мятеж Варды Склира, за что получил от византийского правителя право завоевать и пожизненно использовать исторические армянские районы-Карин, Басен, Харк, Апахуник и тд.. В 989г., стремясь сохранить полученное уже как безусловную собственность, Давид принял участие в мятеже Варды Фоки. Однако, после поражения мятежников, под угрозой вторжения византийских войск, он был вынужден завещать свои владения Василию II. В 1001 г. Давид был отравлен и убит, после чего Василий II вступил в права наследования. Часть Тайка Василий II уступил в пожизненное использование царю объединенной Грузии Баграту и его отцу Гургену.

В 1014 г. после смерти царя Баграта его сын и преемник Георгий I отказался возвращать Тайк Василию II, что привело к войне за наследство Давида Курапалата между Византией и Грузией, которая завершилась в 1022 г. поражением Грузии. Царь Армении Иоанн-Смбат, который во время грузино-византийского конфликта поддержал Георгия I, как и Давид Курапалат, вынужден был свое царство завещать Византии, получив за это сан магистра.

²⁹ *Лордкипанидзе М. Д., նշվ. աշխ., էջ 79:*

³⁰ *Степаненко В. П., Из истории византийской провинциальной администрации, Античная древность и средние века, 2008. Вып. 38, с. 99, Юзбашян К.Р. Армянские государства эпохи Багратидов и Византия (IX-XI вв.). М., 1988, с. 158-160.*

³¹ *Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, էջ 673-674:*